ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 370-Ա

13 հուլիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ <<ՀՐԱԺԵՇՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՆ>> ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով. ***որոշում եմ՝***

1. 2022 թվականի հուլիսի 27-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում <<Հրաժեշտ մանկապարտեզին>> և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում վարդավառի օրվան նվիրված միջոցառում կազմակերպման նպատակով ապրանքների գնման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Լուսինե Հայրապետյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Եստեր Արշակյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Անուշիկ Գասպարյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի <<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի>> անվան մանկապարտեզ, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին.

Միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 461500 (չորս հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:

3. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրն և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հուլիսի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 371-Ա

13 հուլիսի 2022 թվական

ՀՐԱՆՏ ՀՄԱՅԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ և 29-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով. ***որոշում եմ՝***

1. Հրանտ Հմայակի Սարգսյանին ½ մաս, Արմեն Սերյոժայի Ավդալյանին ½ մաս սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ազատության հրապարակ հասցեում գտնվող նախկին հյուրանոցը /կադաստրային ծածկագիր 08-003-034-001/ և հյուրանոցին սեփականության իրավունքով պատկանող 0.13 հեկտար մակերեսով հողամասը անհրաժեշտություն է առաջացել բաժանել երկու մասի:

2. Արմեն Սերյոժայի Ավդալյանին ½ մաս պատկանող նախկին հյուրանոցի արևելյան հատվածը /կադաստրային ծածկագիր 08-003-034-/ և սեփականության իրավունքով 0.07581 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք, Ազատության հրապարակ թիվ 11 հյուրանոց:

3. Հրանտ Հմայակի Սարգսյանին ½ մաս պատկանող նախկին հյուրանոցի արևմտյան հատվածը /կադաստրային ծածկագիր 08-003-034-/ և սեփականության իրավունքով 0.06066 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք, Ազատության հրապարակ թիվ 11/1 հյուրանոց:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հուլիսի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՊԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 372-Ա

14 հուլիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անահիտ Արտյուշայի Սևումյանի կողմից լիազորված անձ Նվեր Արտյուշայի Սևումյանի (անձնագիր AU 0407057, տրված 04.11.2020 թվականին, 022-ի կողմից) կողմից ներկայացված դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 11-րդ փողոց թիվ 34 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,100277 հեկտար, որից 0,10 հեկտար հողամասը սեփականության իրավունքով Անահիտ Սևումյանին պատկանող հողամասն է (հիմք՝ 1997 թվականի մայիսի 20-ի նոտարի կողմից վավերացված կիսակառույց բնակելի տան առուծախի պայմանագիրը):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 11-րդ փողոց թիվ 34 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջներին, հողամասը ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 11-րդ փողոց թիվ 34 հասցեում գտնվող Անահիտ Արտյուշայի Սևումյանին /ծնված 17.11.1966 թվականին/, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար օրինական հատկացված 0,10 հեկտար մակերեսով հողամասին կից 0,00277 հեկտար հողամասի չափով ճանաչել նրանց սեփականությունը 0,10277 հեկտար հողամասի և դրա վրա գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:
2. Թիվ 2 շինությունը թողնել ինքնակամ:
3. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հուլիսի 14
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 373-Ա

15 հուլիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՀԻՏ ԱՐՏՅՈՒՇԱՅԻ ՍԵՎՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Անահիտ Արտյուշայի Սևումյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող Անահիտ Արտյուշայի Սևումյանին /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0009-0001/ պատկանող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամասի 11-րդ փողոց, թիվ 34 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հուլիսի 15
քաղաք Մարալիկ